

ռաջ Ուրարտուի մէջ նշանաւոր էր երկրին կարմիր հիւսուածեղէնը, հակառակ որ Երզնկա, Գուին-Արտաշատ նշանաւոր էին իրենց հիւս-
ուածեղէն զանազան արտադրութիւններով, մենք պատմական ոչինչ
ունինք մեր արգի մատենագրութեան մէջ: Գոհ եմ խորհելով որ
հայկական դորդարուեստի ասպիւյս ուսումնասիրութեանց համար
հաստատուն մեկնակէտ մը պիտի ըլլայ սոյն աշխատութիւնս, մեկ-
նակէտ մը որ անտարակոյս ունի վիճելի եւ ամբողջացուելիք կէտեր:
Ինծի պակսեցաւ նման որ եւ է մեկնակէտ, եւ այդ պատճառաւ միայն
եւ կ'ըլլամ պատասխանատու այս ԳՈՐԳԸ ՀԱՅՈՑ ՄՕՏ զործիս բոլոր
թերութիւններուն:
